

Յտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мшак»

Յայտարարում թիւնների համար վճարում են
 իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

„ՄԵՆԿ“

1881

(Տ Ա Ս Ն Ե Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)

Գրվել է կարերի է խմբագրություն մեջ հետևյալ հասցեով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ԶԳԱԼԻ ՊԱԿԱՍՈՒԹԻՒՆ

Անուրանալի է որ հայ ազգը
խելօք և ընդունակ ազգ է, բայց
նա ունի մի մեծ, մի զգալի պա-
կասութիւն՝ այն է որ դէպի ա-

ԴԱՆԻԹ ԲԷԿ

(1722—1728)

၆.

Ուզաճողական և փառաբարձական բազմաները հենց նրա մեջ յանցանոր խորհույթը—միզանչելի փրատարական սրբության գէմ և չը յարգել ուսում խօսքը: Նրկումն էլ մեծ անպատուութիւն էին մի պետի համար, որքան վայրենի, որքան խրաբարձութիւն վէրն նա: Փորոս իշխանի ընդունելութիւնն պայմանները սկզբից որոշոված էին նրա հետ. իշխանը պիտի դար երկու հարիւր ձիաւորներով, բերելով իր հետ զերիները ազատելու փրկանքի: Փրկանքի քանակութիւնը կամ ընծաւորներ արժէքը որոշոված էէին, որանք թողոված էին իշխանի միմահորութեան վրա: Նրկում հարկիւր

*) Զարուհն, պարսից կրեաօսր:

Հայերը մեծ յափշտակու-
թեամբ սկսում են մի գործ,
բայց շուտով ձանձրանում են,
զզվում են և թողնելով իրանց
սկսած գործը երեսի վրա, ձեռ-
նամուկս են լինում նոր գործին։
Հայը չունի այն տոկոնությունը,
որ յատկանիշ է զերմանացուն ա-
մեն բանի մէջ, հայը իր բնատու-
րութեամբ աւելի նման է հարա-

Այնչէս խանր այդ խորհրդածութիւնների մէջ էր, կանանոցի վրաններից դուրս եկաւ մի կին։ Նա ոտքից զլուռ վաթմաթված էր մուգ-կապտա-դոյն չաղրչարի (զաղիֆայ) մէջ և երեսը ծածկած ունէր սպիտակ, անթափանցիկ քօզով, որի աչքերը ծածկող մասը միայն ունէր մաղաձև հիւս-վածք տեսութիւնը իսպառւել խափանկու հա-մար։ Ռէտիկի, նաղաբայլ ընթացքով դիմում էր նա գէպի խանի վրանի և նրա առջևից դնում էր ծերունի Ամմըը յնքբինապետի բոլոր ինքնա-վատահութեամբ։ Հանապարհից բոլորը յետ էին քաշվում, երեսները չուռ էին տալիս, մտածելով, որ անցնողը խանի հարեմի խանուսներից մէկը պէտք է լինի։ Եւ իրաւ, դա Սիւրին էր, ծերունի Ամմըլից տեղեկացած լինելով երկու մէկըների մասնութիւնների մասին, գնում էր իր ամուսնու մօտ Նայ գերիների աղաւանութեան համար բարե-խաւելու։ Նա անցաւ, դէպի խանի վրանի տն-մասը, որ կոչվում էր խալվաթ-խանայ (զաղտ-

Հայերը հիմնում են մի դրպ-
րոց, մեծ յափշտակութեամբ սկը-
սում են գործը: Բայց չէ անց-
նում մի տարի, արդէն դպրոցը
թողնվում է անհոգ դրութեանն
մէջ: Պահպանել հինը հայի բնա-
ւորութեանը հակառակ է. հայը
միշտ տրամադրված է արդէն
ստեղծածը արհամարհել, իսկ
միշտ նորը ստեղծել, որ կրկին
չէ պահպանում: Թիֆլիսում կան
երկու օրիորդական դպրոցներ,
որոնք արդէն քիչ թէ շատ ա-
նուն ստացան, միջոցներ ունեն-
ալակերտուհիների մեծ թիւ ու-
նեն: Մի հարուստ հայ երեւ-
չի օգնի արդէն եղած դպրոցին,
որքան և լաւ գնար այդ դպրո-
ցը, այլ կաշխատի ստեղծել մի
նորը, որպէս զի հիմնադրի փառ-
քը փայելէ: Բայց դրա հետե-

նորան), ներքինին բաց արեց նրա առջև մուտքը, նա ներս մտաւ, կրկին նրա ետեւից մուտքը փակվեցաւ: Սիւրբին մնաց միայնակ զարդանարանի մէջ: Նա մի կողմ ձգեց մոյգ-կապտադոյն չադրը, որի մէջ փաթաթված էր և յայտնվեցաւ որպէս մի ծովային յաւերժահարս, որ յանկարծ դուրս է գալիս ոտորէի միջոց: Նա երեսից յետ քաշեց քօղը: Այդ թանձր, անթափանցիկ քօղը, կարծես, խեղդում էր նրան: Այժմ սկսեց աղաւթ շունչ քաշել: Այն օրվայ բոլոր անցքերի թողել էին նրա սրտում դառն և ցաւալի տպաւորութիւններ: Հարմի կանանց նախանձը, զլիւս մազերի կտրվելը, հայ գիւղացիների սոսկալի վախճանը, իր հօր և նրա համանման արքանեակի բանասարկութիւնները,—այդ բոլորը այն աստիճան վրդովել է այն աստիճան տխրութեան մէջ էին գցել նրան, որ նմանում էր մի անմիկթարս սգաւորի, որը կտրցած է լինում այն, ինչ որ ամենաթանկագինն է աշխարհում նրա համար: Այսուամենայնիւ, այս բոլորը չէր կարող պատճառ տալ հարմի ոտորկին ուշադրութիւն չը դարձնել իր հագուստի և զարդարանք վրա, որ պէտ վայել էր իր իշխանի աչքին երբնապէս համար: Նա տխուր էր, թէ ուրախ,—մի և նոյն է պէտք էր սովորական պէշանքով ներկայանալ իր իշխողին: Նրա կարճիկ չալվարը (խփկայ) կարժած էր վարդազոյն ատլախից, ոսկեհուռ բանվածքով և ստորին եզերքը չորս մատի լայնութեամբ զարդարած մաքրախմբութեամբ և զոհարանբով: Թիկնոցը կարված էր մանիշակազոյն թաւիչից, նոյնպէս ոսկէ թիկնոցով նախշած և եզերքը մարդախմբութեամբ զարդարած: Խոշոր մարջանաձև կով չարած մի թմանգալին մանեակ քաշ էր ընկած պարանոցից կիսամուրկ կուղծքի վրա: Ամբողջ մարմնը բուրում էր անուշոտութեամբ:

Նշա՞ծ դպրոցը, եղա՞ծ ընկե-
րութիւնը, եղա՞ծ հրատարակու-
թիւնը չենք պահպանում, աշ-
խատում ենք նորերը ստեղծել,—
և յետոյ նորն էլ վատ է գնում,
հինն էլ, որովհետեւ թէ մտաւոր
և թէ նիւթական ոյժերը բա-
ժանված լինելով՝ երկուսն էլ
թուլանում են: Յաւալի է, բայց
պէտք է խոստովանվել, որ սե-
րունդներ պէտք է անցնեն, մինչ-

Հարամի ինտրիգաների մէջ սովորել էր նա փոքր ինչ խորամանկ լինել: Մտածում էր իր միջնորդութեանը մի գերբնական, գաղտնի ազդեցութեանից ներշնչված, խորհրդաւոր ձեւ տալ: Կրթա համար բաւական էր հնարել մի եւրազ, առե՛լ թէ երազումն այս տեսայ, այն տեսայ և այս բոլոր տեսիլների ազդարարութեան համեմատ, պէտք է դառնալ գերխելոյն, եթէ ոչ, հետեանքը պատ կը լինի, որովհետեւ Աստուած մեծ պատիժ է սպառնում: Բայց ինչու այդ բոլորն ուր էր մտածում նա, քննու սկզբից խորհած, նախապատրաստված, չը զիսնց նա գործին: Նա չտապեց: Հէնց որ ծերունի ներքինապետը հազորդեց նրան, թէ ինչ թակարդ լսրեցին երկու մէլիքները, հէնց որ լսեց նա փողի առաջին ձայնը, որ ազդարարում էր թորոտ իշխանի դալը, նա սրճապարեց խանի մօտ, հաղիվ ժամանակ գտնելով հաղիվելու: Այժմ միանգամայն հասկացաւ նա իր կատարած դերի վտանգաւոր կողմերը: Միթէ խանի կասկածը չէ՞ր

չև որ այդ աստիճանն փչացած, կեանքի մէջ ոչինչ բարոյական հաստատ սկզբունք, բարոյական կրթութիւն չունեցող հասարակութիւն ընդունակ կը դառնայ առաջադիմական որ և է կանոնաւոր շարժման:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի, յունվարի 8-ին հայ դերասանական խումբը ներկայացրեց «Խելքից պատուհաս» (Горе от ума) կոմ. 4 արարուածով Գրիբոեդովի, թարգ. ոտանաւորով պ. Տէր-Աստուածատուրեանի:

Գրիբոեդովի այդ գրութեանը, թէ իր բովանդակութեամբ և թէ լեզուի կողմից ուսաց գրականութեան մէջ առաջնակարգ տեղ է բռնում:

Ձը կամենալով պատմել Գրիբոեդովի պատուհասի բովանդակութիւնը, հարկաւոր ենք համարում նկատել, որ այդ գրութեանը մի կողմ, մի անհաշտ պատկերացում է ներկայացնում հին սերունդի, որի ներկայացուցիչը Ֆամուսովն է, և նոր սերունդի մէջ, որի ներկայացուցիչը Չացկին է հանդիսանում:

Կամենալով նկարագրել մի քանի ժամանակակից Մոսկովի հասարակութեան կեանքը, նա, ուսում քննիչների վկայութեան համեմատ, բաւական պակասութիւններ ունի, Չացկու անձնաւորութիւնը անաշտ է, իսկ Գրիբոեդովը գործող անձինք շատ գեղեցիկ են նկարագրված:

Հին սերունդի ներկայացուցիչը, Ֆամուսով շատ գեղեցիկ նկարագրված է իբրև հասարակութեան անգամ և իբրև ուսում ստորադաս, իսկ Չացկին, նոր սերունդի ներկայացուցիչը, իր հակառակորդների պակասութիւնները կրկնակային ենթարկել համարձակվող այդ ազատաստիք բաւական ան-

գոյն, թոյլ և խնքն իրան հակասող մի բնաւորութիւն է:

Վասակցութիւններից մէկը ներկայացուցիչները ամբողջապէս դուրս են բերված պիեսայի մէջ, սկսելով Մոսկովից մինչև Ֆամուսով, միւս կուսակցութեան ներկայացուցիչը, Չացկին, միայնակ է և նրա ասածներին ոչ ոք արձագանք չէ տալիս:

Գրիբոեդովի լեզուն ազատ, կենդանի և խոսակցական լեզու է այնպիսի ոտանաւորներով գրած, որոնցից գրեթէ իւրաքանչիւրը դարձել է առած և անդադար գործ է անվում խոսակցութեան ժամանակ:

Հայոց բեմի վրա պիեսան համեմատաբար շատ լաւ անցաւ: Երբեք էր, որ գործին մասնակցողներից իւրաքանչիւրը բարեխաղար էր վերաբերվել իր պարտականութեանը և աշխատել էր կարելու թեան չափ աջակցել պիեսայի ամբողջութեանը, որ բաւական լաւ էր:

Երբեք էր, որ ընթերցողը, կամ նրա գործը կատարող անձինք, լաւ ուսումնասիրած էին պիեսան և խաղացողներին մեկնել էին պիեսայի բոլոր կէտերի նշանակութիւնը, գործողութեան ժամանակ գերասանների բռնկել գիրքը, նրանց շարժուածքները և այլն:

Այն բանը մեզ այնքան նկատելի էր, որ կարծես մեր գերասանները և դերասանուհիք բացառութեամբ աս և պ. Չացկինի և պ. պ. Սլաւոստի և Մանդրինի մի սերտած դաս էին տալում, բայց պէտք է խոստովանել, որ այդ հանգամանքը հասարակութեան աչքը չէր ընկնում, որովհետև այս դեպքում պէտք է հասարակութիւնը վատ տպաւորութիւն ստանար, իսկ դրա հակառակը կըլտ:

Առանձին ուղադրութեան արժանի են պ. Չացկինի գրիմը, հագուստը, նրա շարժումները և այլն, որի պատճառով պ. Չացկինի հասարակութիւնը անընդհատ ծափահարութիւններով և ընծաներով ընդունեց:

Պ. Տէր-Աստուածատուրեանը Մոսկովից դարձրեց մի ծառայ, մի բեմամիտ ծառայ, որ զուրկ

է մինչև անգամ այդ դասակարգին պատկանողների յանգրմութենից և իրենց պարտն ներքին նմանվելու անձուհի ձևերից: Վատ չէր լինի, եթէ պարտը շատ չէր ակայէր իր տաղանդի մասին և ի նկատի ունենար, որ անմշակ իւրաքանչիւր գանձը ոչ ոքի համար պիտանի չէ: Ի վերջոյ խօսում նրա մասին, որ պ. Տէր-Աստուածատուրեանը է աւանդի, տեսնելով պոստիցիների իրանից անհամեմատ գերազանց խաղը, որ նա պէտք է ուսումնասիրէր իր գերը, բաւական էր մտածել, որ Մոսկովիւր ապրում է արիւստակրատ աստիճանաւորի տանը, պըտըտում է արիւստակրատ կանանց շրջանի մէջ, ուրիշ նրա ձևերն էլ պէտք է այդ շրջանին փոքր ի շատէ համեմատ լինէին:

Թարգմանութեան մասին մենք ոչինչ չենք կարող ասել, քանի որ նա տպված չէ և ձեռագիրն էլ մենք չենք նայել: Գրիբոեդովի պատուհասի թարգմանութիւնը, մի և նոյն ժամանակ ոտանաւորով, շատ զգուար գործ է և գտնել նրա մասին գերասանների արտասանութեան և մի անգամ թատրոնի մէջ լսածի համեմատ, մենք անկարելի ենք համարում: Մենք միայն նշանակցից, որ դերասանները մեծ մասամբ ոտանաւորները արտասանելու ժամանակ երգում էին, փոխանակ ձայնի խօսակցական էլ և էջն անելու: Ձը գիտե՞ք այդ հանգամանքը դերասանների ոտանաւոր արտասանելու անկարողութեանը վերաբերել, թէ թարգմանութեանը: Պիեսայի թարգմանիչ, պ. Տէր-Աստուածատուրեանը, մի քանի անգամ բեմ կանչվեցաւ: Որքան մենք մտաբերում ենք, այդ առաջին անգամն է, որ թարգմանողը բեմ է կանչվում:

Մի քանի խօսք էլ կօմիտեմք, որ հասարակութեան շնորհակալութեան արժանի է Ստարովսկու «Արդիւնաւոր պաշտօն» և Գրիբոեդովի պատուհասը հայոց բեմի վրա ներկայացնելու համար, որը, թէպէտ հին, պատմական և հեռաւոր քաղաքի կեանք է նկարագրում, այնու ամենայնիւ հասարակութեանը օգուտ տուեց:

Թող մասնագիտովը շարունակէ իր բնական շնոր ընթացքը: Թող առօրեայ կեանքից

վերցրած պիեսներ ներկայացնէ, չը բաւականանայ թարգմանութիւններով, այլ փոխադրել տայ, չը բաւականանայ թարգմանութիւնները և փոխադրութիւնները վարձատրելով, այլ պրեմիաներ նշանակէ լաւերի համար, ինչպէս մենք վաղուց խորհուրդ ենք տուել և այն ժամանակ հայոց թատրոնը շքեղութեան առարկայ, աւելորդ զարդ չի լինի, այլ օգտաւէտ մի հիմնարկութիւն, մի ուսումնարան:

Երբ մասնագիտովը հայ թատրոնը այն գրութեան կը հասցնէ, որ ժողովուրդը առօրեայ պիեսները տեսնելու համար նոյն պէս կը լցնէ թատրոնը, ինչպէս և բոմանտիկական անբնական պիեսները տեսնելու, այն ժամանակ նա ուղղած կը լինի իր սկզբնական սխալը:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կրկնում ենք դարձեալ որ բացի «Մշակի» խմբագրատունից թիֆլիսցիները կարող են գրվել «Մշակին» պ. Շալվերովի պալլիթում, որ գտնվում է Ալեքսանդրեան ալգու. անկիւնում, Գօրովսկիի պրոսպեկտի վրա: Իսկ օտարաքաղաքացիք պէտք է դիմեն ուղղակի մեր խմբագրութեանը:

Լուու Հայ-Գեարդեար գիւղից մեզ հաղորդում են, որ յունվարի 9-ին գիշերը Յ. Թեանցի ամբողջ ընտանիքը՝ որ հինգ հոգուց է բաղկացած, անյայտ չարագործները սրի են անցրել: Նոյն երեկոյ Բ. Մեանցի խոտի դէպքը դարձեալ անյայտ չարագործները պըրել են: Այդ անցքերի մասին մեր թղթակիցը խոստանում է մեզ մի այլ անգամ մանրամասնութիւններ հաղորդել:

ԱԼԷԿՍԱՆԴՐԱՊՈԼԻՑ մեզ գրում են, «Այս ձմեռը անցեալ ձմեռվայ կատարեալ հակապատկերն է: Որքան դաժան և ցուրտ էր անցեալ ձմեռը, այնքան մեղմ և տաք է այս տարվանը: Յունվարի երեքին, չորսին և հինգին այն աստիճան տաք էր եղանակը, որ ձիւնի փոխանակ զալիս էր յորդառատ անձրեւ, ինչպէս մայիս ամսին: Այս տարի թէ քաղաքում և թէ շրջականերում սառտիկ տարածված են տիֆը և բուբոնը: Կուրծքից կուրծք ցաւ: Արեւիցը շատ դուրս է տանում մանուկներին:»

գրգռի նա, երբ կիմանար, թէ իր կինը լրտեսում է նրա խօսակցութիւնները, թէ Աննէլի ձեռքով կաշառում է սպասարարներին, թէ... վերջապէս շատ բաներ կարող էր գիտենալ նա, այնուհետ քնքը կորած էր:

Ան այդ մտառանշութիւնների մէջ գտաւ նրան խնքը, որ աւելի բարկացած, քան թէ զարմացած իր ամուսնի անակնկալ այցելութեան վրա, ներս մտաւ գաղտնաբանը: Հարմիր մէջ փակված կնոջ իր արգելադրանքից դուրս գալը, և ահապէս բացվելու միջից անցնելով, այդ վրանը մտնելը ոչ միայն անպակել, այլ բոլորովին հակառակ էր կանանցի կանոններին: Եւ զրանով պէտք է բացատրել այն սպանական հայեացքը, որով դարձաւ խանր դէպի իր կինը հարցնելով.

— Դու ինչ գործ ունես այստեղ: Սիւրբին մնաց չլիթված. կարծես, նրա լեզուն կապեցին, և մի խօսք անգամ չը գտաւ պատասխանելու: Նրան տրեց մի տեսակ երկիւղ. — ստորակը երկիւղը իր սաքսափելի տիրոջ առջև: Այդ առաջին անգամն էր, որ նա զգում էր իր ոչնչութիւնը, թէ ինքը մասնատական ընտանիքի մէջ մի կրտսերական առարկայ էր, մի փայլուն և խայտառակ զարդ էր, և ոչ կամքի ու խօսքի տէր արարած, և ոչ ամուսնի ընկեր ու նրա խորհրդակից: Խանր նայելով այդ գեղեցիկ, չփոթված առարկայի վրա, որը, որպէս մի աւթի խանր հրեշտակ, ներկայանում էր նրա աչքում իր բոլոր սքանչելի հրապուրանքով, մեղմից իր բարկութիւնը, և մօտենալով, բռնեց նրա ձեռքից, նստեցրեց իր մօտ մախուռէլ օթիցի վրա, հարցրեց.

— Գիտեմ, մի խնդիրով եկած կը լինես ինձ մօտ, խօսիլ, նազելիս, ինչ ունիս ասելու:

Նկզ գրութիւնը մարդուն սրամիտ է չլինում: Սիւրբին յանկարծ յիշեց այն նշանաւոր բոպէն իր ամուսնական կեանքում, որ սկիւղը դրեց նրա ամբախտութեանը: Նա յիշեց այն տաղանդաւոր գիշերը, երբ ինքը տան և չորս տարեկան մի անմեղ աղջիկ, փառասէր հօր ձեռքով ձգվեցաւ խանրի գիրկը: Նա յիշեց այն բոլոր հողեկան տանջանքը, այն բոլոր զարշէլի զգուսնքը, որով ինքը, որպէս մի նոր ձեռփայտ, պատերազմում էր խանրի գաղտնային կրքերի դէմ և չէր կամենում անձնատուր լինել: Նա յիշեց այն խօսքը, որ ամուսնաբերութեան երկվելով առաջ նրան. «Ինչպիսի ինձանից ամեն բան և ես կը տամ քեզ, միայն թէ դու իմ լինես»: Սիւրբին ոչինչ չը խնդրեց և ամենատուր եղաւ... Այնուհետեւ խանր մի քանի անգամ կրկնեց նրան մի և նոյն խոստանքը, բայց Սիւրբին միշտ սպասում էր մի կարեւոր դէպքի, որ իր խնդրածը մի նպատակայարմար և նշանաւոր բան լինէր: Այժմ դէպքը ինքն ըստ ինքեան առաջ եկաւ: Նա չուրեք խանրի առջև, որպէս մի խոնարհ աղերսարկու ստուռածներից ամենասարսափելի արձանի առջև, և իր գեղեցիկ, արտասուքով լի աչքերը դէպի վեր բարձրացնելով, ասաց.

— Իմ իշխանը յիշում է, որ մի պարտք ունի ինձ վճարելու:

— Ի՞նչ պարտք, հարցրեց նա զարմանալով.

Սիւրբին յիշեցրեց նրան հին խոստանքը:

— Այդ ես չեմ մոռացել, ասաց խանր ժպտելով. — ես մեղաւոր չեմ, որ քո առջև վատ պարտական գանկեցայ, դու առհասարակ անհոգ ես քո ապականների վերաբերութեամբ: — չիմայ խնդրի, ինչ որ կամենում ես, ես իմ խոստանքը պատրաստ եմ կատարելու:

— Ես քեզանից մեծ բան չեմ խնդրելու, պա-

տասխանեց Սիւրբին, տակաւին անշարժ մնալով իր չորած գրութեան մէջ. — ես եկայ խնդրելու, որ ազատես հայ գերիներին և Թուրք իշխանին ձեռնունայն յետ չը դարձնես:

— Ա... այդ շատ մեծ բան է քո խնդրածը... պատասխանեց խանր զարմացական բացականչութեամբ, և նրա փոքր ինչ մեղմացած զէմը կրկին մոռացվեցաւ սովորական խոստութեամբ: — Դու կամենում ես ինձ կորցնել տալ մէկը: Այժմ թանկի ամբողջ գանձը:

— Ի՞նչ գանձ: Խանր սկսեց պատմել նրան բոլորը, ինչ որ լսել էր նրա հօրից և մէկը Ֆրանսիացի առասպելական գանձի մասին, աւելացնելով, թէ մեծ յիմարութիւն կը լինէր իր կողմից մի այսպիսի ահագին կողողուր ձեռքից բաց թողնել, մահաւանդ, որ ինքը փողը շատ հարկաւորութիւն ունի:

Սիւրբին պատասխանեց, թէ ինքը երբեք յանձն չէր առնի ձանձրացնել իր «իշխանին» անտեղի խնդիրով և երբեք չէր ցանկանայ զրկել նրան իր շահերից, եթէ գիտենար, որ այդ երեւակայական գանձը գոյութիւն ունի: Բայց նա այդ բոլորը զրկարտութիւն է համարում, թէ և հաղորդողներից մէկը իր հայրն է:

— Ուրեմն ինչ նպատակ ունէի նրանք խաղելու ինձ, հարցրեց խանր խորին վրդովմունքով:

— Նպատակ ունէի... պատասխանեց Սիւրբին զգալի խուլութեամբ, — և նրանց նպատակը ինձ լաւ յայտնի է, բայց այժմ անգարմար եմ համարում հարցրել ձեզ, յուսալով, որ իմ իշխանը կը հաւատայ, որ իր աշակիւնը սուտ խօսող չէ:

Այս խօսքերը արտասանեց նա այնպիսի մի զգացմունքով, որ ազդեց խանրի քարացած սրը:

տի վրա, և նա բռնելով իր առջև չորած գեղեցիկ կնոջ թիւքից, կրկին նստեցրեց իր մօտ, ասելով.

— Ես կը կատարեմ քո խնդիրը:

Սիւրբին ուրախութեամբ ընկաւ իր «իշխանի» գիրկը, թեքերը փաթաթեց նրա պարանոցով, և իր բորբոքված, շառագունած թշերը սեղմեց նրա շրթունքի վրա: Այդ առաջին անգամն էր, որ մանկահասակ կինը այնպէս ջերմ, այնպէս անկեղծ սիրով գրկում էր իր բռնապետին, որին մինչև այն օր միշտ ատել, միշտ անիծել էր իր սրտում:

Այդ միջոցին կրկին հնչեց փողը և հեռուից լսելի եղան ձիաների ամբախելի ձայներ:

— Այժմ հեռացի, հապելիս, ասաց խանր կանգնելով և Սիւրբին իր հետ վեր բարձրացնելով. — Թուրք իշխանը գալիս է:

Սիւրբին ծածկվեցաւ իր միջոց-կապտագոյն չաւորաքի մէջ, ձգեց երեսի վրա անթափանցիկ քողը և դուրս եկաւ գաղտնաբանից: Մուտքի առջև նրան սպասում էր ձեռնոնի ներքինապետը, որը առաջ ընկաւ և տարաւ տիկնոջը մինչև իր վրանը: Այնտեղ միայն հարցրեց ձեռնոնին.

— Զայողվեցաւ:

Սիւրբին, ուրախութեան ժպտը երեսին, պատասխանեց.

— Այո:

— Փառք Աստուծոյ, բացականչեց ձեռնոնին իր գոհունակ ձեռքերը բարձրացնելով դէպի երկինքը:

(Իր շարունակով)

